

միանգամայն տեղեակ պահելով արքունիքը չարժուամի մանրամասնություններուն: Յաջորդ բոլոր դէպքերուն մէջ նախ ծածուկ՝ յետոյ բացայայտ, ա՛յո կ'ըլլայ Վասակի քաղաքականութիւնը: Հայոց թէ պարսից առջեւ Վարդանը ներկայացնել իբր ապրտամբութեան պատասխանատուն: Թողութիւն պիտի տրուի, կը քարոզէ ամէնուն, «միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ եւ ի բանից Վարդանայ եւ մի կորնչիք ընդ դմա»⁷: Եթէ չարունակէ Վարդան, նա պիտի ըլլայ միայն պատասխանատուն հայոց ու պարսից առջեւ: Եթէ երբեք ետ կենայ՝ հպատակի, այդ եղած կ'ըլլայ միայն Վասակի խորհուրդով:

Ոմանք անարդար ու չափազանցուած կը գտնեն Վասակի դէմ մեր պատմիչներու եւ


⁷ Ղազար Փարպ. էջ Բ. ԼԳ. 211. - Պատմութեան հեղինակը որ եր երկը գրած է դէպքէն տարիներ յետոյ «ուխտս սուտս եւ վկայութիւնս ընդունայնըս», կ'ըսէ այդ հրովարտակին համար:

Ժողովուրդին զգացած դայրոյթը: Սակայն մտածել որ առանց այդ մարդու մեքենայութիւններուն, միացած ու կուռ ազգային կամքի մը առջեւ կրնար շատ դիւրաւ տեղիք տալ Յաղկերտի նման Արքայից արքայ մը, որ ծանօթ է իր շատ գիւրադարձիք բնաւորութեամբ...:

Աղբի մը տուած դատաւճիռը դժուար է թէ առաջ եկած ըլլայ մի միայն Եղիշէի մը դիւրազգած ոգիէն:

Յայտնի է Յունիս 2-ի ճակատամարտին եւլը: Յաղթուիլ, ըսել է՝ հպատակիլ: Յաղկերտ չզղաց այդ զոհունակութիւնը: Յաջորդող տարիներուն պղտոր վիճակին մէջ թէպէտ հեռացուած են Ուխտապահները եւ անոնց ընտանիքները, սակայն ակնածելի են եւ աւարկայ նախանձի, միւնչեւ որ Վահան Մամիկոնեան դէպքերէն օղտուկով կը յաջողի պարսից արքունիքին յարգել տալ իր եւ հօրեղբոր պայմանները:

Հ. Յ. Զ.



Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՄԱՍՈՒՆՔՆԵՐԸ

ՄԻՆՉԻՆՈՒ Աւարայրի պանծալի Հերոսամարտին 1500 ամեակը առարկայ կ'ըլլայ ամբողջ Հայ Սփիւռքի համագլխին ու խանդավառ ցոյցերուն, միւս գոյին ու խանդավառ ցոյցերուն, միւս կողմէ սակայն աւելի շեշտուած կը զգանք այսօր մեր սրտերու զգացումներուն առջեւ խոշոր պարագիծի մը:

Ստուգիւմ որքան մեծ պիտի ըլլար այսօր բոլոր հայորդիներու ցնծութիւնը՝ եթէ բախտն ունենայինք միանգամայն բոլոր ունեւէրի եւ Հայրենիքի ճշմարիտ ունեւէր Կրօնքի եւ Հայրենիքի գէթ սիրովը անմահացած 1036 վկաներէն գէթ մէկուն նշխարին շուրջ: Ինչպիսի պերճ թափօրներով պիտի ուզէինք զաւառէ զաւառ, բազմաբէ բազմաբ շրջանցնել այդ սուրբ դիւցազնը, իբր միակ ներկայացուցիչը դիւցազնը, իբր միակ ներկայացուցիչը Նահատակներուն: Առանց ցիչը սուրբ Նահատակներուն, ամէն խտրութեան՝ ազգային ամէն կեղծոյն, ամէն անհատ երկրպագ յարգանքով պիտի հետեւէր անոր, ինչպէս ամէն բրիտանիայ տեւէր անոր, ինչպէս ամէն մէկ յաերկրներ կը կատարուին: Ո՛չ մէկ յա

բանուանութիւն, ոչ մէկ հայ կուսակցութիւն պիտի չուզէր թերանալ իր ջերմ արտայայտութեան սրտազին բաժինը բերելու սոյն դիւցազնացած Նահատակին, թէ ըլլար ան նոյնիսկ ամէնէն անուս ու թէ ըլլար զինուորը: Անոր մէջ պիտի պարզուէր զինուորը: Ինք Կարմիրն Վարդան, խորհրդանշուէր ինք Կարմիրն Վարդան, մէջ պիտի տեսնէինք Քաջն Վարդանի բոլոր զօրավարներն ու զօրականները:

Անծանօթ չեն մեզի Հայ իրականութեան մէջ դարերու տուած բերքը... Եւ թեան մէջ դարերու տուած բերքը... Եւ թեան մէջ դարերու տուած բերքը... Եւ թեան մէջ դարերու տուած բերքը...

Այդ տեսակէտէն, ինչ որ ծանօթ է ինծի, յատկապէս շահագրգռուած են հետեւալ երկու ազգային բերթոյնները:

Առաջինն է Հ. Աւիշան, որ իր քաղցր քնարի թելերով հետեւալ հարցը կու տայ.

Եւ դուք կարմիր Վարդանայ վարդանման դուք ընկերք Որ յԱրտագու գաշտերէն մինչ ի Համէն էք քրնքր Արդեօք ձեր սուրբ արեան գին՝ աշխարհիդ բախտն յիշելով՝ Շարժէք դեռ զքաջ բազկներ հոգիներուդ կըրակով:

Ու չի տարակուսիր յատուկ հանգստաբաններ ունենալուն երբ կ'ըսէ.

Ով Հայրապետք սուրբ փառք աշխարհիդ Որ նընջեցիք ի մատրանց ներքեւ:

Երկրորդն է Գամառ Քաթիպա, որ Վարդանի կողմէ իր քաջերուն ուղղուած քաջաւերանքին մէջ կ'ենթադրէ ազգային զգացումով մը նոյն նախատեսութիւնը.

Ձեր անկման տեղը կրօնասէր մարդիկ կը դարձնեն անշուշտ աղօթոյ տեղիք, Ձեր մարմինն ամեն մի Հայի համար կը դառնան մատուց սրբոց փերկարար:

Բայց Հ. Աւիշան, որուն ուշադրութեան չի վրիպիր Հայրենիքի ոչ մէկ անկուն, ոչ մէկ յիշատակ, մղուած բարեկրին, ոչ մէկ յիշատակ, մղուած բարեկրին, ոչ մէկ յիշատակ, մղուած բարեկրին...

(1) Նուագը, Հար. Գ. տպ. 1926. Լուսնկայն Գերեզմանաց Հայոց, էջ 304.
(2) Անդ, էջ 306.
(3) Բանաստեղծութիւնք. Մոսկուա, 1864. Քաջ Վարդան Մամիկոնեանի մահը, էջ 109:

Այդ մասին ունի առ Հ. Մինաս Նու-
րիխան ուղղուած շահեկան և անտիպ
նամակ մը, որմէ կը քաղեմ հետեւեալը.

«... Այսօր տօն է Վարդանանց, և յիշեա-
լիք ի դէպ ժամուշ, ի սմին ժամուշ քնկարաց
և գիր մի ի Կ. Պօլսէ, յորտեմ նշանակեալ
էր Յիշատակարան մի գրեալ ի Համլէն յա-
նապատու Ս. Խաչիկ Հօր և «Սոչրք Վար-
դանանց նշխարաց, որ ստոռ եղեալ են ի
պարծանս և ի պանկանոքիւն գաշաւիս Հա-
մաշինոյ»։ Գիշտ նշխարացն, գէր տեղոյն
և անապատին կամ վանոց Խաչիկ Հօր և
Վարդանանց, էր և է իմ ցանկոքիւն բազ-
մամեայ. արդեօք կատարեցի՞ միւն կենդանի
իցեմ⁴»։

Վերոյիշեալ նամակի դիտելի կէտերն
են ուրեմն ա) Համաշէնի մէջ Վարդանանց
մասունքներու գոյութիւն մը, եթէ անցեալ
ժամանակի իմաստով Համաշէնի այդ։ Ան-

(4) 12 Փետր. 1885. (Գիւտն Միս. Վ. Կենտկոյ).
(5) Նուագը, Հար. Գ. էջ 305.



ծանօթ ըլլալով մեզի Յիշատակարանի
գրութեան թուականը՝ չէ կարելի աւելի
որոշ բան մը ըսել։ Բ) Նամակագիրը՝ ծա-
նօթ Նահապետի հայրենասէր զգացումնե-
րուն ու բաղձանքներուն՝ ուզած է Վար-
դանանց տօնին օրը հաճելի անակնկալ
մ'ընել հեռուէն, զրկելով պանծալի նա-
հատակներու մասունքներուն շուրջ տեղե-
կութիւն մը պարունակող Յիշատակարան
մը։ Գ) Յոյց կու տայ յատկապէս Ալիշանի
երկարամեայ ցանկութեան ուժգնութիւնը
անոնց մասին, որ մինչեւ անգամ կը
փափաքի մասունքներու գիւտը լսել իր
կենդանութեանը, և այդ մեծ միտքարու-
թիւնն ունենալ իր «Արդ արձակեալ»էն
առաջ։

Հոս կարծես կը կրկնուին մեր աւանջին
մէջ իր այս տողերը.

Ահ, ո՛հ... լըսէ՞ք ոգիք Հայկազեանց
Նահապետիս լըսէ՞ք հառաչանք...
Լըսեմ լըսեմ ես ըզձայն հարանց,
Ահա շարժին բացուին գերեզմանք⁵։

Հ. Դ. ՏԱՅԵԱՆ

Ս. ՂԵՒՈՆԴ ԵՐԷՑ ՎԱՆԱՆԴԱՑԻ

Վարդանանց 1500-ամեակին առթիւ կու տանք մեր ընթերցողներուն՝ Հ. Ղեւոնդ Ալիշանի
Ս. Ղեւոնդ Երէց Վանանդացիի վրայ գրած հոյակապ ճառին թարգմանութիւնը, գնելով հոս
մաս մը միտայն, մնացած մասը թողնով «Բազմավէպ»ի յաջորդ թիւերուն։ Ալիշան իր այս հրա-
շունչ ճառին մէջ գրած է իր բովանդակ սիրտը, մաքին կորովը, հոգւոյն խանդավառանքն ու
սէրը իր անուանակիր մեծ Սուրբին, որ ոգին էր Աւարայրի Դիւցազններուն։ Տեղագրական գոր-
ծերէն «Աւարատ» հատորին մէջ (էջ 90-106) գետեղած է զայն, Վանանդ գաւառի վրայ խօսած
ատեն, չկարենալով զսպել իր հիացումը այն մեծ դէմքին որ Վանանդի փառքն ու պատիւը եղաւ։

ԱՐԱՐԱՅԻՆ ընդունուած զանազան ձիւ-
քերուն և շնորհքներուն մէջ երեք
հատ կան, որով մարդս մեծ և հրաշալի
կը հանդիսանայ իր նմաններուն աչքին,
և մահկանացուներու ասպարէզին սովո-
րական սահմաններէն՝ գերազանցելով,
կ'ապշեցնէ ազգերը և դարերը։ Յիշա-
տակարաններ, դիւաններ և արձանագրու-
թիւններ վեհագոյն կը համարին այնպի-
սիները որոնք սրտի, մտքի և հոգւոյ զօ-
րութեամբ նշանաւոր եղած են։ Եթէ
ազնիւ, օրինաւոր և դժուարին նպատակ
մը զրած՝ դիմէ անոր իր բոլոր զօրու-
թեամբը իրականացնելու զայն, և երբ
հասնի ամբողջացնելու կամ մահովը ար-
գիւտի՝ քաջ և արի կը համարուի, կը գով-
ուի և կը պատուուի այն սիրտը։ Եւ եթէ
տարբերութեան ծանձրութիւնը և համարութիւնը
որ զինքը կը պատեն, և որով ինքն իսկ
կազմուած է, կամ բնութեան օրէնքը և
ոյժը կերպով մը պատուելով աշխատի
թափանցել և նոր բան մը երեւան հանէ,
կամ իրմէ առաջ եղողներուն յայտնած-
նելը յիշողութեան մէջ ընդարձակօրէն
ամբարէ, գիտուն և խմաստուն կը ճանչցուի
և կը մեծարուի այն միտքը։ - Իսկ երբ
այս երկուքին մէջ զօրաւոր ըլլայ կամ
ոչ, սակայն գերագոյն փափաքով մը կամ
բերումով իր արարչին և ստեղծողին դիմէ,
աստուածութեան նմանելու հրաշագան-
կութանքով, իր հոգեղէն կազմութեան տա-

րողութեան չափով, ազնիւ և սարք կը
խոստովանուի և կը պաշտուի այն հոգին։
Առաքինի Սիրտը, Միտքը և Հոգին. կամ
Արիւթիւն, Իմաստութիւն և Սրբութիւն
երբեակ սքանչելիք մարդու մէջ, որոնց
երկիր պատուանդանը կ'ըլլայ, երկինք
երկիր պատուանդանը կ'ըլլայ, համար
ալ օթեման։ Հայրենիքի օգտին համար
մանաւանդ նշանաւոր հանդիսացողները
կիրթ և անբաղաքալիւթ ազգեր կը հոգա-
կնէին զանոնք զանազան կերպերով, ինչ
կեն զանոնք զանազան իմաստուններուն
որ յայտնի է ամէնուն։ Իմաստուններուն
կը վրայ կը հիանան և կը պարծին անոնք՝ որ
իմաստութեան ճաշակն առած են։ Սուր-
բեմը՝ ազնուագոյնները մարդերու մէջ, եկե-
ղեցին ու երկինք կը տօնեն և պիտի տօ-
նեն՝ երբ նոյնիսկ լռեն քնարները, յու-
շարձաններ փշրուին և դարեր և ժամա-
նակներ դադրին։

Թող համախմբուին զմայլողներու այս
երեք խումբերը սքանչանալու համար հազ-
ուագիւտ ու չնաշխարհիկ այն անձերու
վրայ, որոնք այդ երեք հրաշալի ձիւքերը՝
արիւթեան, իմաստութեան և սրբու-
թեան միացուցած իրենց մէջ՝ կը գերա-
զանցեն վեհագոյնները վեհագոյններու մէջ։
Եւ ինչո՞ւ երկրիս ազգերու մէջ ի զուր
շրջինք ու փնտռենք այդպիսի դէմք մը,
քանի որ մեր հայրենիքի մէջ կայ Վա-
նանդացի Երէց մը, Ղեւոնդ Երէցը։ Ճատունց
անդամ չէ հայաստանեայց եկեղեցին իր սուր-
բերուն հետ կը տօնէ զինքը, և ազգային-